ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հուլիսի 2026 թվականի N 987 - Ա

ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվեկշռում հաշվառված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2/14 հասցեում գտնվող մաքսային հսկողության գոտում կուտակված փայտե չորսունները (այսուհետ՝ գույք) դրանց նպատակային օգտագործման նպատակով անհատույց հանձնել՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ 27 022 (քսանյոթ հազար քսաներկու) հատ, ընդհանուր՝ 81 066 000 (ութսունմեկ միլիոն վաթսունվեց հազար) ՀՀ դրամ արժեքով.

2) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը՝ 8000 (ութ հազար) հատ, ընդհանուր՝ 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ արժեքով:

2. Սահմանել գույքի հանձնման-ընդունման ակտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի հետ համատեղ՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի պարբերաբար հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվեկշռից դուրսգրումը:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնելու ընթացքում առաջացած ծախսերը ենթակա են իրականացման ընդունող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

03.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ